ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԺԽՏՄԱՆ ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ ՌԵՊԼԻԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Որևէ լեզու ուսումնասիրելիս անհնար է շրջանցել հաղորդակցության հիմնական միջոց հանդիսացող և լեզվի դինամիկան ապահովող երկխոսությունները:

Երկխոսության մեջ կարող են գործածվել նախադասության բոլոր հնչերանգային տեսակները՝ պատմողական, հարցական, հրամայական և բացականչական, ուստի սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել այնպիսի երկխոսություններ, որոնց երկու բաղադրիչներն արտահայտված են մեկ հարցական և մեկ ժխտական կամ հաստատական ռեպլիկով[1], և որոնցում մեծ դեր ունի հնչերանգը:

19-20-րդ դարի ֆրանսիական արձակից քաղված նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ թե հաստատական, թե ժխտական պատասխան ռեպլիկները բաժանվում են երկու խմբի.

1. ռեպլիկներ, որոնք պարունակում են լրացուցիչ տեղեկատվություն: Օր՝

M.Manouri - Pourquoi votre cellule ne ferme-t-elle pas ?

Suzanne - **C'est que j'en ai brisé la serrure**. /D.D.143/

Այս օրինակում Սյուզանի պատասխան ռեպլիկն արտահայտում է ներակա հաստատում և միաժամանակ պարունակում է լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ինչու է սենյակի դուռը բաց խոսակցության պահին, և ինչու այն չի փակվում ընդհանրապես (C'est que j'en ai brisé la serrure):

Հաղորդակցության ընթացքում խոսողը ձգտում է իրեն հետաքրքրող հարցի վերաբերյալ ստանալ սպառիչ տեղեկատվություն: Միաժամանակ այն չպետք է ներառի չափից ավելի տեղեկություն կամ հաղորդի այնպիսիք, որոնք հաղորդակցության տվյալ պահին անհրաժեշտ չեն, քանի որ խոսողի նպա-

[1]Réplique բառի բազմիմաստության պատճառով ֆրանսերեն-հայերեն բառարաններում հանդիպում ենք հետևյալ իմաստները՝ ռիմարառած պատասխան (տես Միհրան Հովհաննիսյան «Ֆրանսերեն-հայերեն բառարան» Կ. Պոլիս 1925, անդրադարձում (տես Նորայր Ն. Բիրգանդացի «Ֆրանսերեն-հայերեն բառարան» Կ. Պոլիս 1884: Իսկ Աշոտ Գալստյանը իր «Երկխոսությունները ժամանակակից հայերենում» աշխատությունում, Երևան 2003, առաջարկում է ընդմիջառնում բառը: Սակայն մեր կարծիքով այս բառերից որևէ մեկը չի բացահայտում ռեպլիկ բառի բուն իմաստը, այդ իսկ պատճառով նախընտրում ենք գործածել ռեպլիկ բառը:

տակն է զրույցի ընթացքում ստանալ միայն իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, որը կարող է արտահայտվել բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով: Պատասխան ռեպլիկի միջոցով լրացուցիչ տեղեկատվություն հաղորդելը կախված է հետևյալ գործոններից.

a) իրադրությունը, որում տեղի է ունենում հաղորդակցությունը
b) խոսակիցների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները սոցիալական, ազգակցական (վերադաս-ստորադաս, ծնող-երեխա և այլն)
c) խոսակցի քաղաքավարությունը, բարեկրթություն, մտահորիզոնը և այլն/1,25/:

II. ռեպլիկներ, որոնք լրացուցիչ տեղեկատվություն չեն պարունակում: Օր

M. Manouri.- Suzanne, reconnaissez-vous ce billet?

Suzanne. - **Oui, Monsieur.** /D.D.64/

Այս օրինակը պարունակում է միայն հաստատում. Սյուզանը չի ցանկանում ձգձգել խոսակցությունը, այդ իսկ պատճառով նրա պատասխանը հստակ է և հակիրճ (Oui, Monsieur).

Լրացուցիչ տեղեկատվություն չպարունակող ռեպլիկներն իրենց հերթին կարելի է դասակարգել ըստ ձևական և իմաստային հայեցակետերի: Պատասխան ռեպլիկներն ըստ ձևական հայեցակետի դասակարգելու դեպքում առանձնացնում ենք հետևյալ ենթախմբերը.

a) հաստատական և ժխտական միակազմ (Oui, bien sûr, naturellement, il va sans dire ...) նախադասություն-ռեպլիկներ: Օր

1) Suzanne.- Je ne vous aime pas, chère mère ?

La supérieure. - Non. /D. D. 204/

2) Suzanne.- Sincèrement, vous lui parlerez pour moi ?

Sainte-Thérèse.- **Sans doute**. /D.D. 231

b) հաստատական և ժխտական երկկազմ (C'est ainsi, cela ce peut ...) նախադասություն-ռեպլիկներ: Օր

MOI.- Il faut être pressé d'une cruelle faim ?

LUI.- **Cela ce peut.** /D. D. 348/

c) կրկնությամբ կազմված պատասխան ռեպլիկներ: Նման պատասխան-ռեպլիկները, ըստ կառուցվածքի, կարող են ամբողջությամբ կամ մասամբ համընկնել հարցական ռեպլիկին կամ նրա որևէ անդամին: Օր

MOI.- Et vous en ferez un **musicien** afin qu'il ne manque rien à la ressemblance ?

LUI.- **Un musicien ! Un musicien !** /D. D. 390/

Այս օրինակում կրկնության միջոցով արտահայտված հաստատական նախադասությունը ներակա ժխտում է արտահայտում, որը հեգնական երանգավորում ունի, ինչն արտահայտվում է հնչերանգի միջոցով:

Օրինակների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նմանօրինակ ռեպլիկների գործածությունը սուբյեկտիվ բնույթ է կրում, քանի որ հատուկ հնչերանգի միջոցով խոսակիցն արտահայտում է իր սուբյեկտիվ վերաբերմունքը տվյալ փաստի, իրադրության վերաբերյալ:

Պատասխան ռեպլիկներն ըստ իմաստային հայեցակետի դասակարգելու դեպքում առանձնացնում ենք հետևյալ ենթախմբերը.

a) հուզարտահայտչական պատասխան ռեպլիկներ: Բացի գլխավոր (հիմնանշանակային) իմակներից՝ այս տիպի հաստատական և ժխտական պատասխան ռեպլիկների մեծ մասը պարունակում է հարանշանակային (connotatif) եղանակային-գնահատողական և հուզարտահայտչական իմակներ: Հաստատական հուզարտահայտչական ռեպլիկները կազմվում են naturellement, il va sans dire, absolument, sans doute, c'est clair, fermement, bien sûr, exactement բառերով, իսկ հուզարտահայտչական ժխտման դեպքում կիրառվում է pas մասնիկը: Դիտարկենք հետևյալ օրինակը.

Sainte - Thérèse.- Sincèrement, vous lui parlerez pour moi?

Suzane - **Sans doute,** et pourquoi ne le ferais-je pas après vous l'avoir promis /D.D.,231/

b) ոչ հուզարտահայտչական պատասխան ռեպլիկներ: Այս ռեպլիկները արտահայտում են խուսանավող հաստատում կամ ժխտում:

MOI.- Vous croyez donc que l'homme heureux a son sommeil ?

LUI.- **Oui, je le crois.** /D. D. 390/

Միաժամանակ մենք կարծում ենք, որ պատասխան ռեպլիկների այսպիսի դասակարգումը պայմանական բնույթ է կրում, քանի որ հնչերանգի միջոցով ցանկացած ոչ հուզարտահայտչական պատասխան ռեպլիկ կարող է փոխակերպվել հուզարտահայտչականի: Օր՝

1) MOI.- Vous croyez donc que l'homme heureux a son sommeil ?

LUI.- **Oui, je le crois.** /D. D. 390/

2) MOI.- Vous croyez donc que l'homme heureux a son sommeil ?

LUI.- **Si je le crois !** /D. D. 390/

Առաջին օրինակում պատասխան ռեպլիկը (Oui, je le crois) պարզապես հաստատական նախադասություն է՝ զուրկ հուզարտահայտչական հնչերանգից: Իսկ երկրորդ օրինակում հուզական հնչերանգի միջոցով (Si je le crois!) խոսակիցն արտահայտում է իր հույզերը՝ կասկածը, երկբայությունն ու անվստահությունը (Est-ce que je peux le croire?):

Հաստատում կամ ժխտում պարունակող պատասխան ռեպլիկների մեծ խումբ են կազմում այնպիսիք, որոնք, բացի հիմնական տեղեկատվությունից, պարունակում են նաև լրացուցիչ տեղեկատվություն: Հաղորդվող լրացուցիչ տեղեկատվությունը յուրաքանչյուր անգամ փոփոխվում է ելնելով խոսակցության թեմայից, համատեքստից և իրավիճակից, որում տեղի է ունենում հաղորդակցությունը: Լրացուցիչ տեղեկատվություն պարունակող պատասխան ռեպլիկները մենք բաժանում ենք երկու խմբի բացահայտ հաստատում և ժխտում արտահայտող և ոչ բացահայտ հաստատում կամ ժխտում արտահայտող ռեպլիկներ: Առաջին դեպքում հաստատումը կամ ժխտումն արտահայտվում են վերը թվարկված միջոցներով: Օր՝

Moulineaux - Un duel, hein ?

Aubin - **Non, je ne sais pas me battre. Je tirerais dessus !**.../G. F. 74/

Ներակա հաստատում կամ ժխտում արտահայտող ռեպլիկներում հաստատում կամ ժխտում արտահայտող բառեր կամ նախադասություններ չկան և այդպիսի ռեպլիկները միշտ հասկանալի են դառնում նրանցում առկա կանխենթադրության շնորհիվ: Օր

Pascal.- Où comptes-tu me mettre ? Derrière les robes ?

Margot.- **On verrait tes pieds. Rappelle-toi, j'ai une cachette magnifique.** /J. C.239/

Այս օրինակը (On verrait tes pieds) արտահայտում է ոչ բացահայտ ժխտում, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն է հաղորդում այն մասին, թե ինչու է խոսակիցը բացասաբար վերաբերում խոսողի առաջարկին:

Այս նախադասության հիմքում ընկած է կանխենթադրությունը, որի շնորհիվ էլ վերջինս հասկանալի է դառնում: Կանխենթադրության ընկալումն իր հերթին կախված է խոսողի մտահորիզոնից, աշխարհայացքից, նրա լեզվական գիտելիքների մակարդակից, ընդունակություններից:

Ըստ հավելյալ տեղեկատվության բնույթի բոլոր պատասխան ռեպլիկները մենք բաժանում ենք երկու խմբի 1. ճշգրտող պատասխան ռեպլիկներ և 2. հակադրող պատասխան ռեպլիկներ: 1-ին տիպի պատասխան ռեպլիկները պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը ճշգրտում է հարցական ռեպլիկի բաղադրիչներից որևէ մեկը և դրան չի հակադրվում: Այսպիսի պատասխան ռեպլիկները կարող են պարունակել բացահայտ կամ ոչ բացահայտ հաստատում: Օր՝

Lui.- J'aurai donc de belles boucles de diamants ? Comme celles de cette marquise qui vient quelquefois prendre des gants dans notre boutique?

Moi.- **Précisément.** /D. D. 310/

Ճշգրտող ռեպլիկի միջոցով խոսողը վստահեցնում է խոսակցին այն բանում, որ վերջինս կունենա ադամանդե ականջօղեր (Tu les auras):

2-րդ տիպի պատասխան ռեպլիկները պարունակում են այնպիսի լրացուցիչ տեղեկատվություն, որը հակադրվում է հարցական ռեպլիկի որևէ բաղադրիչին կամ նրա ստորոգյալին: Տվյալ դեպքում պատասխան ռեպլիկը սովորաբար արտահայտում է բացահայտ կամ ոչ բացահայտ ժխտում: Օր՝

M. Manouri.- Que n'appeliez-vous un homme de loi ? Que ne protestiez-vous pas ? Vous avez eu les vingt-quatre heures pour constater votre regret.

Suzanne.- **Quand je les aurais sues, étais-je en état d'en user?** /D.D. 11/

Ըստ լրացուցիչ տեղեկատվության իմաստային կազմի՝ ուսումնասիրվող պատասխան ռեպլիկներն էապես տարբերվում են միմյանցից, կազմելով երկու խումբ. նրանցից յուրաքանչյուրը բաժանվում է մի քանի ենթախմբի: Յուրաքանչյուր ենթախմբին էլ հատուկ է պատասխան ռեպլիկների երկու տարրատեսակն էլ (ճշգրտող և հակադրող):

Առաջին խմբին են դասվում այնպիսի պատասխան ռեպլիկները, որոնց հաղորդած լրացուցիչ տեղեկատվությունը վերաբերում է հարցական ռեպլիկի ստորոգյալին: Օր՝

Moi - Veiller à l'éducation de ses enfants ? (Est-ce possible de veiller à l'éducation de ses enfants ?)

Lui - **Vanité! C'est l'affaire d'un précepteur.** /D. D. 331/

Տվյալ օրինակում հարցական (Veiller à l'éducation de ses enfants ?) ռեպլիկը փոխարինվել է լրացուցիչ տեղեկատվություն պարունակող Vanité բառ-նախադասությամբ. պատասխան ռեպլիկը հարաբերակից է հարցական նախադասության ստորոգյալին և նրա ժխտական իմաստը հասկացվում է նրանում առկա կանխենթադրությամբ, իսկ հատուկ հնչերանգի միջոցով խոսակիցն իր հեգնական վերաբերմունքն է արտահայտում խոսողի այն պնդմանը, թե ինքն անծամբ պետք է զբաղվի երեխաների կրթությամբ:

Այս խմբում առանձնացնում ենք պատասխան ռեպլիկների հետևյալ ենթախմբերը.

1) Հաստատումը կամ ժխտումը պատճառաբանող պատասխան ռեպլիկներ:

Այս ենթախմբի պատասխան ռեպլիկներն արտահայտում են հաստատական կամ ժխտական ասույթի պատճառաբանվածությունը, որն առաջին դեպքում ունի պատասխան ռեպլիկի ստորոգումը ճշգրտող, իսկ երկրորդ դեպքում հակադրվող բնույթ: Օր՝

M. Manouri.- Pourquoi, me dit-il, ne vous confessez-vous point ?

Suzanne.- **C'est qu'on m'en empêche.** /D. D. 142/

Margot.- Et tu t'imagines que son amour résistera au scandale? Pourquoi ne lui as-tu pas avoué tout ? Tu avais peur de perdre ta place?

Maxime.- **J'avais peur de lui faire de la peine.** /J. C. 230/

Առաջին օրինակում Սյուզանի պատասխան ռեպլիկը (C'est qu'on m'en empêche) ճշգրտող բնույթ ունի, շնորհիվ որի պարոն Մանուրիին հասկանալի է դառնում Սյուզանի սենյակի դռան փակ լինելու պատճառը: Երկրորդ օրինակում Մաքսիմի պատասխան ռեպլիկը (J'avais peur de lui faire de la peine) հակադրվող բնույթ ունի. ներակա ժխտման միջոցով Մաքսիմը հակադրվում է Մարգոյի պնդումներին: Տվյալ դեպքում Մաքսիմի պատասխանը մեղմացուցիչ բնույթ ունի կանխենթադրվող ժխտման միջոցով նա փորձում է խուսափել Մարգոյի հետ վիճելու հնարավորությունից և միաժամանակ բացատրել իր այդպիսի պահվածքի պատճառը:

2) Հաստատական կամ ժխտական պատասխան ռեպլիկի ստորոգյալը սահմանափակող, լրացուցիչ տեղեկատվություն պարունակող պատասխան ռեպլիկներ:

Այս ենթախմբի պատասխան ռեպլիկները պարունակում են այնպիսի լրացուցիչ տեղեկատվություն, որը հաստատումը կամ ժխտումը դարձնում է թերի: Այս տիպի կառույցներում մեծ է mais շաղկապի իմաստային-կառուցվածքային դերը /2,22/ : Օր

La supérieure - Que dira le monde ? Que diront nos soeurs ?

Suzanne - Madame, lui dis-je, voulez-vous éviter un éclat; il y aurait un moyen. Je ne cours point après ma dot; je ne demande que la liberté: je ne dis point que vous m'ouvriez les portes; **mais faites seulement aujourd'hui, demain, après, qu'elles soient mal gardées; et ne vous apercevez de mon évasion que le plus tard que vous pourrez...**

/D. D. 116/

Այս օրինակում Սյուզանն ամբողջությամբ չի ժխտում վարկաբեկությունից խուսափելու հնարավորությունը. կանխենթադրաբար ընկալվող ժխտումը mais շաղկապի շնորհիվ դառնում է թերի և պայմանական (Si vous ne faites pas aujourd'hui...):

3) Տեղեկատվությունն ամբողջական դարձնող, լրացուցիչ տեղեկատվություն պարունակող պատասխան ռեպլիկներ:

Այս ենթախմբի ռեպլիկները, բացի հաստատումից և ժխտումից, պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը լրացնում, ընդլայնում է հարցական նախադասության ստորոգյալի իմաստը: Օր

M. Manouri.- Pourquoi votre cellule ne ferme-t-elle pas?

Suzanne.- **C'est que j'en ai brisé la serrure, pour ouvrir la porte et assister à l'office le jour de l'Ascension.** /D.D.142/

4) Հարցական նախադասության ստորոգման հաստատումից կամ ժխտումից բխող լրացուցիչ տեղեկատվություն պարունակող պատասխան ռեպլիկներ:

Նման հարցական նախադասությունները սովորաբար պարունակում են հետևյալ եղանակավորող բայերը՝ vouloir, pouvoir, falloir և հանդիսանում են հարցում համաձայնության կամ անհամաձայնության վերաբերյալ, իսկ պատասխան ռեպլիկը ոչ միայն արտահայտում է համաձայնություն կամ անհամաձայնություն, այլ նաև նպատակ ունի խոսակցին դրդել որևէ գործողության, ինչն արտահայտվում է հրամայական նախադասությամբ: Օր՝

Suzanne.- Mais si je ne trouve point un époux, est-il nécessaire que je m'enferme dans un couvent ?

Maman.- **A moins que vous ne veuilliez perpétuer ma douleur et mes remords!** /D. D. 61/

Երկրորդ խմբին են դասվում իմաստային այն ենթախմբերը, որոնցում առկա լրացուցիչ տեղեկատվությունը հարաբերակցվում է հարցական ռեպլիկի որևէ բաղադրիչին: Նմանօրինակ հարաբերակցությունը կարող է ցայտուն կերպով երևալ այն դեպքում, երբ հարցական ռեպլիկի որևէ բաղադրիչ (բառ, բառակապակցություն) փոխարինվում է լրացուցիչ տեղեկատվություն պարունակող ռեպլիկի համապատասխան բաղադրիչով կամ ամբողջ ռեպլիկով. միաժամանակ հարցական նախադասությունը փոխակերպվում է պատմողականի: Այս խմբում մենք առանձնացնում ենք հետևյալ ենթախմբերը.

1) Գործողության կատարման ժամանակը ընդգծող պատասխան ռեպլիկներ: Օր՝

Eddie.- Vous n'avez pas faim ?

Mike.- Je ne prends jamais rien **à midi**. /J. C. 112/

2) Գործողության կատարման վայրն ընդգծող պատասխան ռեպլիկներ: Օր՝

Mme Aigreville.- Yvonne, tu ne fais pas de tisanes à ton mari ?

Yvonne.- Mon mari n'a qu'à se faire soigner **chez ses malades...dans ses consultations chorégraphiques**. /G.F.23/

3) Գործողության կատարման չափն ու քանակն ընդգծող պատասխան ռեպլիկներ: Օր՝

La supérieure.- Et comment voit-il cela ?

Suzanne.- Il y voit toutes les noirceurs du crime. votre perte consommée, la mienne projetée. Que sais-je ?

La supérieure.- Allez, me dit-elle, votre P. Lemoine est un visionnaire; **ce n'est pas la première algarade** de cette nature qu'il m'ait causée.

/D. D. 249-250/

Այսպիսով, երկխոսություններում լայն կիրառում ունեն ոչ միայն այն ռեպլիկները, որոնք արտահայտում են բացահայտ հաստատում կամ ժխտում, այլ նաև այնպիսիք, որոնք արտահայտում են ներակա հաստատում կամ ժխտում: Այսպիսի նախադասությունների բովանդակությունը հասկանալի է դառնում նրանցում առկա կանխենթադրության, ինչպես նաև հուզարտահայտչական հնչերանգի շնորհիվ: Կանխենթադրության ընկալումն իր հերթին սուբյեկտիվ բնույթ է կրում, քանի որ կախված է խոսողի մտահորիզոնից, նրա աշխարհայացքից, լեզվական, ինչպես նաև ընդհանուր գիտելիքների մակարդակից: Ոչ բացահայտ հաստատում կամ ժխտում արտահայտող ռեպլիկները կարող են դասակարգվել ըստ ձևական, իմաստային հայեցակետերի, գործածման հաճախականության, ինչպես նաև ըստ լրացուցիչ տեղեկատվության առկայության կամ բացակայության: Պատասխան ռեպլիկներում լրացուցիչ տեղեկատվություն ներառելը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1) իրադրությունը, որում տեղի է ունենում հաղորդակցությունը

2) զրուցակիցների ցանկությունները, նրանց քաղաքավարությունը, բարեկրթությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ентрафова С. М. „Структурно-семантическая организация минимального диалогического единства", М.,1986, с.25
2. Кудрявцева Н. Б. „Функционирование союза „mais„ в различных типах высказываний современного французского языка„. М. ,1985, с.22
3. Дж. Ф. Аллен, Р. Перро „Выявление коммуникативного намерения, содержащегося в высказывании„ том 15, 1980, N3, с. 143-177
4. Ն. Ս. Պառնասյան «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում», Երևան,1970, էջ 75-84:
5. Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան «Հայոց լեզու», 2-րդ մաս, Շարահյուսություն, Երևան 1975, էջ 111-132:
6. Denis Didrot „La religeuse„ Moscou, Edition du progres, 1980
7. Georges Feydeau „Tailleur pour dames„ Librairie Théâtrale, Paris 1993
   Jean Cocteau „La machine a écrire„ Edition du progres, Moscou 1976